



10. ՁԵՎԱՆ ԽԱՆԸՆ

Ձեվան խանըն մեկ հանխալըրի մոտ կաններ էր, մեկ մարթըն էկավ, տեսավ, էնու աչք ինգանվ Ձեվան խանըն: Ձեվան խանըն շատ խորոտ էր:

Ենպես կաններ էր, կը նայեր ախչըկեն ու չըր զըխշըներ ախչըկեն պան՝ ասեր:

Ախչիկ ասաց. - Ինչի՞ ծի կիրիշկես:

Տըղան ասաց. - Տու շատ խորոտ ես, իմ սիրտ քյե կուզան, հանլան չըն զըրխշընա պան ասե:

Ասաց ախչիկ. - Ես էս տեղ մեկ ճաշարան պանցեր եմ, ֆախիր-ֆուխարին խեր-խերիանք կենեմ: Տու էլի՞, գյընան՝, մեկ մարթըն էլ կա, էն էլ ճաշարան պանցե, խեր-խերիանք կենա, ինքյն էլ էտա մարթերու մեչ կերթան դեն, կը գան դեն, ուր ծեռներով կը գանի էնոր քյիթ ու պերնի վերեն: Գյընան՝, էնորից խասկըցի՞, թե էնու պատճառն, մանդեն ի՞նչ ա, արե՞ ծի ասա՞, օր ես քյե առիմ:

Տըղեն էլանվ, գյընանց: Գյընանց էտա մարթու ճաշարան: Հըմեն մարթ նըստավ, խաց կուտեն, ինքյ չըկերավ: Տեսավ, օր ճաշարանի տերն էկավ էտա մարթերու մեչ, դեն գյընանց, դեն էկավ, էրկու ծեռնով էզար մըչ ուր իրեսիմ ու գյընանց ուր տուն:

Տըղեն էլանվ, ինգանվ էնոր հիտեն: Գյընանց էնու տուն:

Էտա մարթ տանցավ, ասաց. - Տըղա՞, ճաշարան էն տեղն ա, գյընան՝, էն տեղ խաց կե՞, տու ընչի՞ իմ հիտեն կը գան:

Ասաց. - Ես կը խընթերեմ քյենե, օր տու քու մանդեն ծի ասես, խի տու ընչի՞՞ գարկիր քու աչքերու մեչ:

Ասաց. - Տըղա՞, ինձնե վա՞զ կաց, չե՞մ ասե:

Ասաց. - Կը խընթերեմ, օր տու ծի ասես քու մանդեն, պիտի

տանեն Բախչկա՛մ պատմեն, օր ինձ առի:

Էտա մարթն էլ ասաց. - Գլընա՛, էնա քանդրի մեջ մեկ զինգա՛րըմ կա, խի՛ խասկըցի՛ էնու մանդեն ի՞նչ ա, օր ուր շինած զին կը տանի չարշին, խարիր կուռուշ տան՝ չի տա, խարիրըհիսուն տան՝ չի տա, էնու զինի արժողութուն քանսուն կուռուշ ի: Վերջ, հիրիկուն կը պիրա, կը տընա շեմի վըրեն, լոգով զին կը կըտըրտա, մյուս օր էլմ կը շինա ու կը տանի չարշին, կը պիրա, կը կըտըրտա: Խասկըցի՛ էնու մանդեն, արի՛, ես էլ իմ մանդեն կասեմ քյե:

Տըղեն էլ՛ավ, գլընաց զինգա՛րի մոտ: Զինգա՛ր չարշու մեջ զին պըռնած ծեռ կը զըվըրեր: Տըղեն ինգա՛վ հիտև: Էնի որ տեղ վե կերթա, տըղեն էլ էնու ետևեն կերթա: Խարիր կուռուշ տըվին՝ չէտուր, խարիր հիսուն տըվին՝ չէտուր: Էպե տուն, էտի վըր շեմին, լոգով լավըմ պըրտեց:

Տըղեն, օր ընգեր էր հիտև չում տուն, խառցուց, ասաց. - Աստվա՛ծ սիրես, քու մանդեն ի՞նչ ա, օր էտա զին չէր արժե քանսուն կուռուշ, խարիր հիսուն տըվին, տու չըտվիր, պիրիր տուն, լոգով պըրտեցիր:

Ասաց. - Քու ինչու՞ն պետք, ընչի՞ ասեմ:

Ասաց. - Զի ասա՛, օր քու մանդից ծի ֆայրա կա:

Ասաց զինգա՛ր. - Քանդրի էն կող մեկ կորըմ կա, լավ խորոտ տներ շիներ ա, էրկու-իրեք խուլամ ա պըռնե, խուլամներ միս կուտեն, չայ կը խմեն, ինքյն ցամաք խաց կուտի: Օրական մեկ տիր էլ խուլամներ էնոր պիտի տըվեն: Տըվեուց օր կը պըռծին, ինքյն կասի. «խուլամներ՛, էն հա՛ղ ծե խալալ չէրի, էն խաց ծե խալալ չէրի, օր տուք չըկարցաք ծի խորոտ տըվեք»:

Գլընա՛, էնու մանդեն խասկըցի՛, արի՛ ծի պատմա՛, ես էլ իմ մանդեն քյե ասեմ:

Տըղեն էլ՛ավ, գլընաց քանդրից մեկ ավուր ճամբա՛խ զատն՝ կորու մոտ:

Տեսավ, օր խըլիսուն խուլամներ էկան, հըմեն մեկի ծեռ թաց կոճանըմ, կորուն կը զանին, ինքյն կաննե թամաշա կենա: Կայիմ տըվեցին:

Կորն ասաց. - Էն հա՛ղ ծե խալալ չէրի, էն խաց ծե խալալ չէրի, օր տուք չըկարցաք ծի կուշտ տըվեք:

Խուլամներ գացին էնոնց սենյակ, կոր գլընաց, մտավ խավերու քամա՛ռ:

Տըղեն ինգա՛վ հետև, գլընաց: Գլընաց մըտ կոր:

Կոր տըղին ասաց. - Ընչի՞ ես էլե ըստա՞, մա՛ ուտելու կա, մա՛ խըմելու: Գըմա՞ մըշակներու մոտ, պըրիմծ, միս, չայ, կե՛ր, խըմա՛, չու՛մ առավոտուն էլի՛, գըմա՞: Ի՞մ մոտ մեկ ցամաք խաց կէլնի:

Ասաց. - Ես ցամաք խացին ըռագի եմ, ես քյե խամար եմ էլե:

Խաց կերան, ասաց կորուն. - Տու քու Աստված, քու մադի խամար եմ էլե, օր տու հաղ տըվեր ես, կեր-խում տըվեր ես էտա մարթերուն, քյե օրական մեկ անգամ կը տըփեն, խի ի՞նչ ա պատճառ՝ ձի ասես:

Կոր ասաց. - Քու ինչո՞ւն պետք ա, չըմ ասի, էլի՛, գըմա՞: Օր ես ասեմ, տու ի՞մ դարդին մեկ դարմանըմ տ՛ էնե՞ս:

Տըղեն ասաց. - Կը խընթերեմ, ձի ասա՛, ես էկա զինգա՛րի մադի խամար, օր տու չասես, զինգա՛րն էլ չասես:

Կոր ասաց. - Տըղա՛, քյե տ՛ասեմ:

Ասաց. - Ես զեբակներու մեծն էր: Յըմեն ժամանակ ֆախիր-ֆուխարին կը թալնենք սարի մեչ: Օրըմ մարթ չէկավ ճամբախ, չըգըմա՞ց, օր թալնենք՝ չում կեսօրին: Կեսօրին չորս խոգյի էկան: Շըլակ էնոնց քամկըներ կերթեն քաղաք: Ես ա՛մր էրի, քանի՛՛մ խոգյի ճամխեցի, օր թալնեն էտոնց: Գա՛ցին, տա՛ռցան էկան, չըթալնեցին:

Ասի. - Տու ընչի՞ չըթալնեցիք:

Ասաց. - Կուլլա՛, չորս խեղճ պըրուտ են, էնոնց շալկըներ աման էր, տանեն քաղաք, ծախեն, տեն խաց-մացի, պերեն, տանեն էնոնց ճըժերու խամար:

Ես հինատ էրի վեր էնոնց, էլա՛, գա՛ցի, չորս պըրուտ պըռնեցի, էնոնց շալկըներու ամըններ հըմեն կոտըրտեցի, էնոնց ջիբ, ծից պըշկեցի, խարիր փարա¹⁰ մըքա կեր խետքյեր, էն փարեն առա ու ետ տա՛ռցա: Խեղճ պըրուտներ տա՛ռցան, ետ գա՛ցին էնոնց տուն: Ես օր տա՛ռցա, էկա ճամխի խետ, մեկ սիվտակ ծիավորըմ, էնու մըզըաղ տըրեր էր մեչ ծիու էրկու ականջ, էկավ, ձի խասավ:

Ձի ասաց. - Անաստված, Աստըծուց չըս վախենա՞, օր տու խեղճ պըրուտներու ամըններ կոտրեցիր ու էնոնց խարիր փարեն առար, էնոնց ճըժերու խացի փարեն էլ կըտըրցուցիր: Էնքան, օր

¹⁰ Քսան կոպեկ (Շ. Բ.):

տաւ փարա կուզես, քյելա՛, գյընա՛, չորս ճարի պե՛ր, ու ես քյե փարա տամ, մեկ էլ տաւ էսա ճամխըներ ֆախիր-ֆուխարին չըտեպիս:

Ես գացի, առա չորս ճարի պերի, առավ ծի ու չորս ճարին, տարավ մեկ սարի՛մ մեչ, էն տեղ մեկ տաւու մ՛ էպաց, չորս ճարին պեռ ոսկի էլից:

- Դե՛, - ասաց, - տա՛ր կըշտացի՛:

Ես էլ պառցի ճարիք, խընդրաց կեանք: Գախպուրը մեռաստ էկավ: Էտա մարթ կըզվա՛վ, ճար խըմեց: Ես բըխտ-բըխտ ծի կասեմ, թե էսա փարեն էնի չի տա ծի: Ձի կը խապա, տանի էնոր: Ես էլ ասի՝ զէնի սպանեմ, փարեն մընա ծի: Էնի կըզվա՛վ, ճար խըմեց, ես թուրըմ թալեցի էնոր վիգ: Էնու գյըլիխ կըտրավ, ես տեսա՝ իմ աչքերն էլ կուրցավ: Գանա էնու գըլըլիխ առա, տըվի իմ ընթիտակ ու աչքեցի, ափլփեցի, մեկ ճարի կընտա՛, կոր եմ չու՛մ ըխի օր ճարիք պերիմ մեկ տեղ: Էն մեկ ճարին առա, էկա: Էտա ճարի պեռ փարով էսա քոշկ ու սարեն շինեցի: Մըկա էտա մըշակներ օրական մեկ անգամ ծի կը տըլփեն, օր իմ կես հաղին չի, ու ես հե՛ր էն մարթ ըսպաներ, հե՛ր իմ աչքեր կորներ: Մըկա էն չորս ճարին պեռ ոսկին էլ իմն էր ու աչքերս էլ սաղ: Իմ մա՛ղեն էսին ա: Թե չըս ավատա, էն մարթու գյըլիխն էլ գի:

Գամա տըղեն էզար, մարթու գյըլիխ առավ ու փախավ տեխ քաղաք:

Առավ, գյընաց գինգարու մոտ:

Ձինգար տըղին ասաց. - Կորու մա՛ղեն տաւ պերի՞ր:

Ասաց՝ խա՛, պերի:

Ասաց. - Ձի պատմա՛ խի ի՞նչ ա:

Ասաց. - Կորու պատմութեն ա՛մա՛ յա. կոր գեթակ էր էղի, ճամխըներ թալան-թուլան կէներ: Օրըմ չորս խատ պըրուտ կը գան, էնոնց շալկըներ աման: Կոր կըլնի, էրկու իրեք խուլամ կը ճամխա, օր թալնին: Մըշակներ կէթան, կը խեն, օր խեղճ են, պա՛՛մ չըկա խետ, չըն թալնի: Կորն կը հըռըկի, կէլնի, կէրթա հառճաներ, էնոնց շալըկներու ամըններ կը կոտըրտա, խարիր փարա կէղի խետքեր, կամնի, կը գա: Մեկ սիվտակ ծիավորըմ՝ ոըմ ծեռ, կը գա, կասա. «Անաստվա՛ծ, տաւ Աստժուց չըս վախենա՞, էտա ֆուխարի ամըններ կոտըրտեցիր, էնոնց խարիր փարեն առար: Օր էնքան փարա տաւ կուզես, գյընա՛, չորս ճարի

պե՛ր, ես քյե փարա տամ, տա՛ր, տիր մ՛ էլ էսա տեղ ֆախիր-ֆու-խարին չըթալնես»։ Կոր կերթա, չորս ճարի կը պերա, կերթան սարի մեչ, չորս պեռ ոսկի կը տա։ Խընդրաց կը գան, վըր հախ-պըրի՛մ կը նըստեն։ Էտա ծիավոր մարթ ճար կը խըմա։ Կոր ինքյն ուր կասա. «Էսա փարեն էնի չի տա ծի, ծի կը խապա»։ Թուրըմ կը գանա, մարթու գըլլիխ կը թըռուցա։ Կըտրելու ժամանակ էնու էր-կու աչքն էլ կը կուրնան։ Էնի կառնի ըզգըլլիխ ու մեկ ճարի, կը գա։ Քոչկ ու սարե՛մ կը շինա, խոլամներուն հանը կը տա, կը տընա հինե, օր հըմեն օր զենի տըփեն, օր էնու կես հանըն չի. ընչի՞ մարթու վիզ կըտրեր, ընչի՞ էնու աչքեր կուրներ։ Թե չէ, չորս պեռ ոսկին էլ չըխո էնորն էր։ Էնու մանդեն էսին ա, չըս ավտա՛ գի գըլլիխն էլ պերեր եմ խետ։

Համա՛ զինգան մեկ էնու ծենով կը բոռա, էտա գըլլիխ կը պագա՛ն։

Տըղեն կը գանմանա, թե էսի ի՞նչ պան ա, էնոր ի՞նչ ա, օր կը պագա՛ն։

Ձինգան կասա. - Տըղա՛, գյինա՞ս իմ մանդեն ի՞նչ ա, օր զը-ներ կը կըտըրտեն, չըմ ծախե։ Օրըմ ես զին առեր էր, քանըքյի մեչ կը ծախեր, տեսա, օր սիվտակ ծիավորըմ ռըմ ծեռն, էկավ, ասաց. «Ձինգան՛ր, էտա զին չը՞ս իտա ծի»։

Ասի՛ կը տամ։

Ասաց. - Գյին ի՞նչ ա։

Ասի. - Խարիր հիսուն կուռուչ ա։

Խարիր հիսուն կուռուչ էտու, չըտվի, ասի՛ խամ ա, բալկո հավիլի մոտեն առեն։

Էտա ծիավոր ծի ասաց. - Քու քյեֆն ա, իմ փարեն թըբարըք ա, օր տանես, խառնես քու փարին, չու՛մ քու տըղի տըղեն էլ ուտա, չըխըլըսի։

Էն մարթ ծին կըշտեց, կընաց։ Վըր ծի էղավ ծախորթություն, էլ իմ խաց՝ խացի, թաց՝ թացի չըխասավ։ Մըկա էնու խամար ես զին կը տանեմ քանըքյ ու կը պիրեմ, չըմ ծախե, կասեմ՝ բալկո էն մարթ էրևա, ընոր ծախեմ։ Ամա՛ էլ իմ հույս կըտրեցի, էսա էն ծիա-վորի գըլլիխն ա։

Տըղեն առավ գըլլիխ, գըլնաց էն մարթու մոտ, օր ճաշարան էր պանցե, ասաց. - Տու զինգանի մանդեն ծի պերի՞ր։

Ասաց. - Խա՛, պերի՛։

Ասաց. - Դե՛, ծի պատմա՛, խի ի՞նչ ա:

Տղոնն պատմեց, ասաց. - Զինգա՛ր զին կը տանի քաղքի մեջ, օր ծախա: Մեյ սիվտակ ծիավորըմ՝ ռըմ ծեռ, էնու ռաստ կը գա՛: Էտա զինին խարիր հիսուն կուռուշ կը տա, էնի չի տա:

Կասա զինգա՛ր. «Էսի խամ ա, բա՛լկո հա՛վիլի փարա մոտեն առնիմ»:

Ծիավոր կը թոնի, կերթա: Զինգա՛րի վերեն կելնի ծախորթութուն: Դոռվան՝ զինգա՛ր ուր շինած զին կը տանի, քաղքի մեջ կը զըվըռացուցա, կասա. «Բա՛լկո Էտա ծիավոր էմէլ գա՛ ռաստ, տամ էնոր»: Ես ծիավորի գըլիխ պերի, էնոր ցուց տվի, էնի էնոր հույս մոտեն կտրեց: Մա՛րթ, զինգա՛րի մա՛ղեն էսին ա:

Մարթ ըսկսավ տըղին պատմել:

Ասաց. - Ես օրըմ Էսա իմ ճաշարանի հախարի մոտ կաներ էր, դիր մ՛ էլ Ես ախչիկըմ Էտա տեղ կանուկ տեսա: Ես Էսպես կը պըշկի ախչըկեն ու չըմ գըխշընա պա՛ մ՛ասե: Ես մեկ էլ տեսա՝ մեկ սիվտակ ծիավորըմ՝ էնու ռըմ ծեռ, էնտիխեն էկավ, ասաց՝ մա՛րթ, տաւ հե՞ր անլե՛մ կը պըշկիս Էտա ախչիկ:

Ես ասի. - Ի՞նչ էնեմ: Ախչըկեն շատ կը սիրեմ ու չըմ գըխշընա պա՛ մ՛ասե:

Ասաց. - Մը՛ վախսեմա, Ես էնի կը պերեմ, կը փըսակեմ քյե վերեն:

Գյընաց, ախչըկե ծեռ պըռնեց, Էպե, Էտիր իմ ծեռաց մեջ, էն տեղ տերտեր մ՛Էպե, մեր փըսակ էրաց:

Ասաց. - Մա՛րթ, հա՛ռճին կիշիր կնիկ տը գա՛, պառկի իմ սենյակ:

Ես էլ ի՞նչ էնեմ, չար նաչար, ասի՝ թըխ գա՛: Ես չըր ուզե էրթեր, հե՞ր անհարմար էր: Լե ասպ ի՞նչ էնեմ, շիվարած մընացեր էր: Հիրիկուն օր Էտուր, քընելու ծամանակ ախչիկ տարավ ուր սենյակ:

Ես մի սահաթ մընացի իմ սենյակի մեջ, իմ քուսն չըտարավ կըսկըծու: Ես էլա՛, գա՛ցի: Ամլա՛ տըռան ծակը վե իշկեցի, ասի. «Իշկեմ, խի իմ կընգան կը պագա՛, խի ի՞նչ կէնա»:

Էտի թուր քա՛շեր էր, տըրեր էր ախչըկե խոգու վերեն, կասեր. «Դե, քյե սեյրի կա, ասա՛, քու սեյրիքը ըսպանեմ, օր տաւ էն մարթուն չըվընասես»:

Ախշիկ ասաց. - Իմ պոճըլի մազերուց մեկ սեյրի վիշապըմ կէլնի տաւս, օր իրկան կըժի, մեռի:

Ծիավոր ասաց. - Դե՛, խա՛ն տաւս:

Ախշիկ խանեց տաւս, էնի էզա՛ր, էտա վիշապ ըսպանեց:

Ծիավոր ասաց. - Դե՛, էլ կա քու սեյրիք, խա՛ն տաւս:

Ախշիկ ասաց. - Չէ՛, էլ չըկա:

Ծիավոր զհռեց վերեմ:

Ախշիկ ասաց. - Մեկ խատ էլ ունիմ սեյրի:

Ծիավոր ասաց. - Քու սեյրին ի՞նչ ա:

Ասաց. - Իմ սեյրին իմ պերնից մեկ ասլան տաւս կը գա՛, օր իմ իրկան կը վընասա:

Ասաց. - Իսն էլ զի թամաշա կէնեմ:

Մեկ էլ էտա մարթ տըռա՛ն պատռուը վե ծի տեսավ հա՛կա՛մա:

Ասաց. - Վուա՛յ, օղորթմա հիսան բերա՛խտ ա, ես էսի պերի, օր էնուր սեյրիք ըսպանեմ, օր քե չըվընասեր ու էլներ, թողներ, փախեր, էրթեր: Էսի իմ քուրն ա ու զոռովի փըսակեցի վըր քե, մըկա տաւ քու սըրտի մեչ գեշ խորխուրթ կազմեր ես, թի՛ էսա մարթ իմ կնիկ տարավ՝ ի՞նչ կէնա:

Էնու խամար էրկուսն էլ հօղից աներևութ էղան:

Ասաց. - Մըկա էսա ճաշարան օր պա՛ցեր էր, էրթըցող, գա՛լա՛ցող կը պերեր, խաց կը կերցուցեր, կասեր՝ բա՛լկո էտա մարթ մեկ էլ ծի ռաստ գա՛ ու ես խընթըրվիմ, բա՛լկո էնու քուրն էլըմ պերա, տա ծի: Քանի օր ճաշ կուտեն, ես կը գեր, մեչ մարթերուն կէրթեր, կը գեր, ես էտա մարթ հինե չըտեսներ: Էնու խամար ես կը գաններ իմ աչքերու մեչ ու կէրթեր տուն: Էն սիվտակ ծիավոր մարթ գի էսա էր: Իմ մաղեն էսին ա:

Տըղեն առավ գըլըխ, գըլընաց խընդ էն ախշիկ:

Տարավ գըլըխ ախշըկե մոտ, ախշիկ գըլըխ տեսնելու պես մեկ էնու ծենով բիռաց և գըլըխ առավ, պագեց:

Ասաց. - Չե՛յ, տըղա՛, էտա մարթ, օր ճաշարան պա՛ցե, տաւ էնու մաղեն ծի պիրի՞ր, ընչի՞ կը գաններ էնու աչքերու մեչ:

Տըղեն ասաց. - Խա՛, պերի:

Ասաց. - Դե պատմա՛:

Տըղեն ասաց. - Ձեվա՛ խանըմ, էտա մարթ էնու ճաշարանի կըշտի հա՛խպըրի վերեմ մեկ ախշիկըմ կը տեսնի, կուզա՛ օր

ախչիկ առի, չըգըխշընա ծեռ թանլի հինե, մարթն էմլա շիվարած՝
կը պըշկի խընդ ախչիկ:

Մեկ էլ կը տեսնի, օր սիվտակ ծիավոր մարթըմ՝ ռըմ ծեռ, կը
գա՛ կը պատահի:

Կասա. - Տո՛ մարթ, ի՞նչ ա, տաւ կը պըշկիս էտա ախչիկ: Չէ-
դի՞ կուզես առիս:

Կասա. - Խա՛, ես շատ կուզեմ առնիլ, չըմ գըխշընա:

Կասա. - Օր ընցկուն ա, ես կը պերեմ, կը փըսակեմ վեր քյե:

Կասա. - Էպի փսակեց վըր ծի: Չի ասաց. «Օր փըսակեմ
վըր քյե, հանճին կիշիր տը գա՛, պառկի իմ սենյակ»: Ես էլ ասի՝
ուր քյեֆն ա, թ՛ էրթա պառկի: Եփ էղավ հիրիկուն, ճաշարանի
տեր գյընաց ուր սենյակ, ախչիկ գյընաց ծիավորի սենյակ:
ճաշարանի տիրոջ քաւն չըտանի, կասա, թե՛ իմ կնիկ տարեր ա,
հաւրաւ պա՛մ կէնա: ճաշարանի տեր կասա. «Ես էլա՛, գացի, տը-
ռան ծակերուց աչկեցի, օր թուր քաշեր էր, ախչիկեմ կասեր, թե՛
քաւ սեյրիքյ ի՞նչ ա, ասա՛, քաւ սեյրիքյ ըսպանիմ, օր տաւ էտա
մարթաւն չըվընասիս»:

Ախչիկ կասա. - Իմ սեյրին պոճըկներու մագերուց մեկ վի-
շապըմ կէլնի, մարթաւ կը վընասա:

Ծիավոր էտա վիշապ խանիլ կը տա տուս, էտա վիշապ կը
սպանա:

Ասաց. - Դե՛, ասա՛, խի էլ ի՞նչ կա:

Ասաց. - Իմ պերնից էլ մեկ ասլան կէլի, մարթաւ կը վընասա:

Ասաց. - Ես էլ գի թամաշա կէնեմ: Մեկ էլ ծի տըռան ծակը
վեր ըխավ: Ասաց. «Յա՛յ գյիդի, բեբախտ հիսան: Ես պերեր եմ
ի՞նչ պատճառներով՝ էնոր սեյրիքյ կը սպանեմ, օր քյե չըվընասա,
տաւ էկեր ես գյեշ սրտով կիշկես, կասես, թե էտա մարթ իմ կնիկ
տարեր, խի ի՞նչ կէնա»: Էրկուսն էլ աներուտ էղան: Ասաց. «Ես
իմ ճաշարան պացեր եմ, բալկո էն մարթ տիր մ՛էլ գյեր, ես տես-
ներ, խընթըրվեր, օր բալկո էմէլ էնոր քաւր տեր ծի»:

Եփ օր ես էտա գյըլիս պերի էնոր, տեսավ, էն էլ էնու հույս
հըմեն պանից կըտրեց, ասաց. - Էտա գի ծիավորն ա:

Ջեվա՛ խանըմ ասաց լաճուն. - Էն ախչիկ եսն եմ, էտա սիվ-
տակ ծիավորն էլ իմ ախպերն էր, ես ճաշարան պացի, ֆախիր-
ֆուխարին խաց կը տեր: Կասեր, թի իմ ախպեր սաղ ա՛ չըխո թո

էնու կաղի բալի հանած կան գա, թե մեռեր ա, թ'երթաւ էնու խո-
գիւն:

Ասաց. - Մըկա գի տիւ գըղըլիս պերեր ես, ճաշարան կը
կոծեն:

Եփ ճաշարան կոծեց, տըղային ասաց. - Դե գըղնա՛, տեր-
տերըմ պե՛, թի մեր փըսակ էնա: Աստված ծի էնոր կըսմաթ չէրաց,
քյե կըսմաթ էրաց:

Տըղեն գըղնաց, տերտեր մ'էպե, էնոնց փըսակ էրաց, էնոնց
քոչկ ու սարե մ'ավա էրին, մեչ ապրան:

